կ'այցելէ ուխտագնացութեամբ և կը վերադառնայ Երզնկա, ապա Պոլիս հանդիպելով՝ իրեն հայրենակից Դարանաղցի Գրիգոր վրդ.ի հետ վերջին անգամ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, ուր եւ կը վախճանի։ (տե՛ս նաև Դարանաղցի, էջ 591=599)։

ՊԵՏՐՈՍ ԱՐ. ՍՐԵԻԵԼՅԻ.— Մբ. 1831ին կը պաշտօնավարէր Բեթղեհէմի Ս. Ծննդեան վանքին մէջ։

ՊԵՏՐՈՍ ԱՐ.— Մբ. 1782ին. Նւ. Երուսաղէմի Պայազիտի մէջ։ Յիշատակարանի մը մէջ իր մասին կը կարդանք հետեւեալ տողերը. «Միխայէլ Ասորւոյ պատմութիւն. ես սբ. յէմյ. նուրկ. Պետրոս տրուպ արեղայ ընթերցայ ի քաղաքն Պայազիտ. ի ՌՄԼԱ (=1782) թուին, և ամսեանն Դկտմբրի. 2ին աւարտ»։ (ՅԱ. էջ 18—19. Թ. 18)։

ՊԵՏՐՈՍ ԱԿՆՑԻ.— Ս. Յակոբի ժառ. Վարժ.ի թանգարանին մէջ կը գտնուի քարէ յիշատակարան մը, որ կը կարծուի թէ՝ Զիթենեաց լեռը Շուշանիկի մոգայիք դամբարանին մօտերը գտնուած է (MC. A. en S. էջ 6—7). նոյն յիշատակարանին արձանագրութիւնն է հետեւեալը.

«Ա.ծ. վս. Ակնցի Ահիշ. Պտրոսին և ծնողացն որ աշխատաց ի նորոգումն սբ. տաճարիս յիշեցէք ի տէր»։

ՊԵՏՐՈՍ ԴՊԻՐ.— Մբ. Ս. Յակոբի վանքին մէջ 1616ին կ'ընդօրինակէ Սաղմոս մը։

ՊԵՏՐՈՍ ԵՊՍ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ, ԿԵՍԱՐԱՑԻ, (ՎԱՆՔ ԳԻՒՂ).— Մբ. որդի Խանճի Պուտախի. աշկ. Կաղզուանցի Զաքարիա պատրիարքի՝ որուն կը փոխանորդէ (1786—1801). (ՄՁ. Թ. 399. Նաև Դիւան, Գիրք Ե. էջ 143). այս միջոցին կ'ընդօրինակէ Յեսուայ և Եզեկիելի գրոց մեկնութիւնները 1679 թուականը կրող ձեռագիրի մը վրայէն (1786). Նաև Վարդան վրդ.ի Սաղմոսաց Մեկնութիւնը (1796), Շղթայակիրի և Կոլոտի օրինակէն Կանոնագիրք մը (1795). (ՄՁ. Թ. 1121. Թ. 1143. Թ. 182). Պետրոս եպս. այս վերջնոյն կցած է հետեւեալ յիշատակարանը. «Մեծի Կ. Պոլսոյ Տեառն Զաքարիա ազգասէր և բարեկարգ պատրիարքին ձեռնասուն աշակերտ եւ վիճիղ Կեսարացի ի վանք գիւղէն, յԱստուածատրեանց զարմէ. Պետրոս և եթ եպիսկոպոս ձեռամբ իմով գրելով ի Պոլիս պատրիարքարանս եղեալ յօրինակէն որ էր գրեալ Տեառն Գրիգորի սրբոյ Սաղիմայ և Տեառն Յովհան-